տակ անհրաժեշտ է, նպատակին առաջնորդ և ուղեցոյց է որոշուած և հարկ է լինել, որ միմիայն կրօնն է, և ահա այս կարօղ պէտք է լինի տնօրինող կանոնաց՝ սահմանաց և օրինաց։ Օ՛սոսա պաշտելն և գործադրելն հանդիսացուցանող առաւել կրօնն է. և միթէ վատթար և դառն հեռևանաց համար է։

Ո՛չինչ այնքան սանձել չէ կարող ժողովուրդ՝ որքան կրօն։ Ո՜հ, քանի՛ քաղցր է նմին մահ վասն կրօնի։ Ձի՛ք տարակոյս։ Կրօնի համար գիտէ զոհել ամենայն բան։ Կրօնի համար ամենայն ձախորդութեանց և արկածից մէջ կզգայ մեծ մխիթարութիւն և յոյս։

Խաղաւորք և բռնաւորք՝ Հեթանոսք և Քրիստոնեայք կրօնից շնորհներով կիշխէին և կիշխեն ժողովրդեան, և թէ առանց կրօնից չեն կարողացած գոյութիւն ունենալ և չեն կարող։ Մինչև անգամ եղան աշխարհակալք՝ որք զանձինս պաշտեցուցին ժողովրդեան, որպէս զի առաւել ոգևորելով նոցա կրօնական զգացմունքները՝ ամենահրաշ հպատակներ և կոյր գործիքներ կազմեն՝ ամենայն կամաց և պատուիրանաց ազդեցութիւն խորագոյն տպաւորելոյ համար։

Մի՛շտ և ամենայն կողմ աշխարհի կրօն տիրած է և կը տիրէ. չկայ երկիր և ժողովուրդ՝ որ առանց կրօնի լինի։ Բայց ո՛չ ամենայն կրօն ճշմարիտ է և փրկարար, և ոչ ամենայն տեղ կրօնն միատեսակ և միևնոյն նպատակի և հաւատոյ վերայ հաստատուած է։ Բազմատեսակ կրօններ կան և միմեանց հակառակ՝ ինչպէս Քրիստոնէութիւն, Հրէից, Պրամանաց, Մահմեականաց և այլոց։ Առաջինն ևս բազում տեսակներ ունի՝ մինչև անգամ միմեանց հակառակ՝ միևնոյն Քրիստոսի հետևող խոստովանելով զանձինս, և մեր նպատակն է յաջորդ թուով սոցին տարբերութեանց վերայ համառօտ տեսութեամբ անցնիլ։

ՎԱՆՕՐԱՅՔ

Քրիստոնէական Աստուածպաշտութեան առաջին հանդիսարանքը կը կազմեն Վանօրայք։

Յաշխարհէ մեկուսացող՝ մշտամռունչ աղօթից և աստուածային մտածմանց և անմահ կենաց սիրահար անձանց բնակարան են Վանօրայք։

Սոցա մէջ կրօնքը հաստատահիմն շառաւիղներ արձակելով՝ բարի օրինակներ և աստուածասէր առաքինութեանց անձկալի նախանձներ կընծայեն ժողովրդեան։ Սոցա մէջ կը զարշանան կրօնից պաշտօնեայք, և ի սոցանէ կը տարածուէին և պէտք է տարածուին ի Հայաստան աշխարհի քարոզողներ Խանին Կենաց։ Մի՛ով բանիւ՝ սոցա մէջ մեր Կրօնից՝ Եկեղեցոյ և Ազգի պաշտպանութիւն և ապահովութիւն ամրացած էին և պէտք են ամենակերպ յարձակմանց ընդդէմ։

Գրեթէ յամենայն դարս, եթէ ո՛չ բոլորը՝ դէթ շատերը յազգային վանօրէից քանի՜ և որպիսի՜ մեծապանծ և սխրալի ծառայութեամբք բազմաշահ օգուտներ ընծայելով՝ թէ և թիկունք հանդիսացած են ազգի ի պաշտպանութիւն մեր Ս. Եկեղեցոյ՝ թող պատմութիւնը վկայէ, որ բազում մասամբք կապացուցանէ։

ՎԱՆՕՐԱՅՔ

Քրիստոնէական Աստուածպաշտութեան առաջին հանդիսարանքը կը կազմեն Վանօրայք։

Յաշխարհէ մեկուսացող՝ մշտամռունչ աղօթից և աստուածային մտածմանց և անմահ կենաց սիրահար անձանց բնակարան են Վանօրայք։

Սոցա մէջ կրօնքը հաստատահիմն շառաւիղներ արձակելով՝ բարի օրինակներ և աստուածասէր առաքինութեանց անձկալի նախանձներ կընծայեն ժողովրդեան։ Սոցա մէջ կը զարշանան կրօնից պաշտօնեայք, և ի սոցանէ կը տարածուէին և պէտք է տարածուին ի Հայաստան աշխարհի քարոզողներ Խանին Կենաց։ Մի՛ով բանիւ՝ սոցա մէջ մեր Կրօնից՝ Եկեղեցոյ և Ազգի պաշտպանութիւն և ապահովութիւն ամրացած էին և պէտք են ամենակերպ յարձակմանց ընդդէմ։

Գրեթէ յամենայն դարս, եթէ ո՛չ բոլորը՝ դէթ շատերը յազգային վանօրէից քանի՜ և որպիսի՜ մեծապանծ և սխրալի ծառայութեամբք բազմաշահ օգուտներ ընծայելով՝ թէ և թիկունք հանդիսացած են ազգի ի պաշտպանութիւն մեր Ս. Եկեղեցոյ՝ թող պատմութիւնը վկայէ, որ բազում մասամբք կապացուցանէ։

Վանօրէից գոյութիւնը ոչ միայն այսչափ, այլ առաւել վսեմ և կարևոր արդիւնքներ կը ծնանէին ազգիս. քանզի ոչ միայն անձնուրաց միայնակեացք աղօթից պարապէին, աղքատք և անցաւորք կերակրէին, անտերունջք հիւրընկալէին ի նոսին, այլ մանաւանդ Հայ մանկտեաց լուսաւորութեան և դաստիարակութեան համար վարժարանք և ուսումնարանք էին նոքա: Մտածել արժան է թէ՝ այնպիսի դպրոցք ապաքէն քանի օգուտներ կարտացրէին, յայտնի է մեր նախնեաց մատենագրական երկասիրութիւններէն, թողում յիշել, զի հաւաքելով ի շրջակայից ազգային մանկունքը՝ ուսուցանէին նոցա մայրենական լեզուն՝ ուսումն կրօն և դաստիարակութիւն: Ժամանակաց այլևայլ դէպքերը՝ յարձակմունք հինից թշնամեաց՝ քաղաքական պատերազմունք իշխանութեանց և բռնաւորաց՝ հազիւ վանօրէից ոմանց մէջ միջոց և թոյլտուութիւն կը շնորհէին ուսմանց և գիտութեանց դպրոցաց կանգուն մնալով ծաղկելոյն:

Սոցա մէջ եղած դասատուութիւնք հասարակօրէն ընթերցանութիւն՝ գրել և կրօնական թեթև գիտելիքներ էին, իսկ առաւել բարձր մակացութիւնք և հմտութիւնք խիստ սակաւուց ոմանց գտանել կարելի էր ուսանելու համար: Այս դասը կը կազմէր աւելի հոգևորականութիւնը: Ըստ որում ուսմունք և գիտութիւնք եկեղեցականաց համար միայն կարծես թէ կարևոր էին և պիտանի. որում ապացոյց կը փայլին հազարաւոր երկասիրութիւնք և մատենագրութիւնք նախնեաց: Ժողովրդեան կրած արկածք և ազգի ազգի դառըն բերմունք՝ կը զրկէին զնոսա՝ հազիւ զանձինս և զընտանիս հոգալոյ և ապահով պահելոյ միջոցներ խնդրելու կարօղանալով: Բայց և այնպէս վանօրէից մէջ սակաւուց ստացած վեր իվերոյ ուսումը և կրօնական գիտութիւնը՝ մեծապէս կընպաստէր եկեղեցւոյ և ազգի պաշտպանութեան և պահպանութեան, և Առաջնորդք և վանականք կառաջնորդէին նոցա:

Ուրեմն վանօրայք միշտ մեր ազգի և եկեղեցւոյ համար օգտաւէտ և անհրաժեշտ պիտանի հաստատութիւնք եղած են՝ զըլխաւորապէս ազատելով և պահպանելով զազգ և զեկեղեցի ի չարամիտ թշնամեաց:

Ուր ժողովուրդը մտաւոր և բարոյական զարգացման և ընդունակութեանց առջև քօղարկեալ խաւար վարագոյրներ կը տեսնէ, անդ վանօրէից պաշտօնները մեծ են և անհրաժեշտ:

Թէև մեր վանօրէից անցեալ և ներկայ անցից և վիճակաց մէջ մեծ տարբերութիւնք կերևին, սակայն պէտք է խոստովանիլ՝ որ առաւելապէս հարկաւորութիւն կայ նոցա բարգաւաճման և բարեկարգութեան, և պէտք է ջանալ ամեն կարելի միջոց ի գործ դնել այս նպատակին ժամաննելոյ բաղձանօք:

Արդարև ցաւ է տեսնել՝ որ շատ վանօրայք բարձի թողի եղած, բազումք աւերակ մնացած են, բայց չեմք կարող միթէ ըստ հնարաւորութեան՝ գլխաւորաց վերայ յատկապէս ուշադրութիւն դարձնել, խնամել, զարդարել, և գէթ (վանական) դպրոցներով ազգին առաւել ՝օգտատուդրութեանց ենթարկել:

Թող անցեալն լինի մեզ հայելի: Ո՞չ ապաքէն այժմ առաւել կարօտութիւն ունիմք վանօրէից և նոցա մէջ դպրոցաց: